*Օրինակելի ձև*

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը ստորև ներկայացնում է իր կարիքների համար տվյալների փոխանակման, տեղեկատվական, գերատեսչական համակարգչային գլոբալ ցանցի սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված № ՀՀ-ՏԿԶՆ-ՇՀԾՁԲ-15/18-17-6 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2017 թվականի մարտի 6-ին կնքված № ՀՀ-ՏԿԶՆ-ՇՀԾՁԲ-15/18-17-6/5 պայմանագրում 2017 թվականի դեկտեմբերի 5-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝
երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

***Փոփոխության առաջացման պատճառ.***

1. Նախարարությունում տեղադրվել են նոր սերնդի սերվերային համակարգիչներ, ինչի արդյունքում անհրաժեշտություն է առաջացել մատուցվող ծառայությունների ավելացման:

***Փոփոխության նկարագրություն.***
Պայմանագրի գնի ավելացում օրենսդրությամբ սահմանված կարգով:

***Փոփոխության հիմնավորում*** - ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 60-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն:

Պատվիրատու՝ ***<u>ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն</u>***

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № ՀՀ-ՏԿԶՆ-ՇՀԾՁԲ-15/18-17-6/5/1

## 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐԻ 6-ԻՆ ԿՆՔՎԱԾ № ՀՀ-ՏԿԶՆ-ՇՀԾՁԲ-15/18-17-6/5 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ, ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ, ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԳԼՈԲԱԼ ՑԱՆՑԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «05» դեկտեմբերի 2017թ.

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Մ. Բաղդասարյանի, որը գործում է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու) և Ա/Ձ Լեռնիկ Մամիկոնի Սարիբեկյանը (այսուհետև՝ Կատարող), (այսուհետև՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 60-րդ կետի 2-րդ ենթակետով և «06» մարտի 2017թ. կնքված № ՀՀ-ՏԿԶՆ-ՇՀԾՁԲ-15/18-17-6/5 ծածկագրով պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.3 կետով, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. **Համաձայնագրի առարկան**

1.1 2017թ.մարտի 6-ին կնքված № ՀՀ-ՏԿԶՆ-ՇՀԾՁԲ-15/18-17-6/5 ծածկագրով պայմանագրի.

ա) 4.1 կետում «4550000 (չորս միլիոն հինգ հարյուր հիսուն հազար)» թիվը և բառերը փոխարինել «4990000 (չորս միլիոն ինը հարյուր իննսուն հազար)» թվով և բառերով:

բ) Հավելված 1-ը շարադրել նոր խմբագրությամբ համաձայն հավելվածի 1-ի:

գ) Հավելված 2-ը շարադրել նոր խմբագրությամբ համաձայն հավելվածի 2-ի:

2. **Այլ պայմաններ**

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է 2017թ. մարտի 6-ին կնքված № ՀՀ-ՏԿԶՆ-ՇՀԾՁԲ-15/18-17-6/5 ծածկագրով գնման պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

| **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** | **ԿԱՏԱՐՈՂ** |
|---|---|
| ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն<br>ք. Երևան, Հանրապետության հրապարակ Կառավարական տուն 3<br>ՀՀ ՖՆ գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011001295<br>ՀՎՀՀ 02578338 | Ա/Ձ Լեռնիկ Սարիբեկյան Մամիկոնի<br>ք. Աբովյան, 2-րդ փողոց, տուն 11<br>«Կոնվերս բանկ» ՓԲԸ<br>Հ/Հ 1930056573280100<br>ՀՎՀՀ 85805035 |
| **Աշխատակազմի ղեկավար** | **Ա/Ձ** |
| ------------------------ Մ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ<br>(ստորագրություն)<br>Կ.Տ | ------------------------ Լ.ՍԱՐԻԲԵԿՅԱՆ<br>(ստորագրություն)<br>Կ.Տ |

*Հավելված 1*
*«05» դեկտեմբերի 2017թ. կնքված*
*№ ՀՀ-ՏԿԶՆ-ՇՀԾՁԲ-15/18-17-6/5/1 համաձայնագրի*

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| | | |
|---|---|---|
| ***Ձեռքբերվող ծառայության նկարագիրը*** | | |
| ***հ/հ*** | ***Ծառայության անվանումը*** | ***Նկարագրությունը*** |
| 1 | 2 | 3 |
| ***1.*** | ***Ցանցային ադմինիստրատորի ծառայություններ*** | -Համակարգչային ցանցի տեխնիկական և ծրագրային սպասարկում, ցանցում համատեղ օգտագործման ծրագրերի սպասարկում, ցանցում տվյալների բազաների տեղադրում և սպասարկում:<br>- Ինտերնետային կապի և էլեկտրոնային փոստի հասանելիություն ապահովող սերվեր համակարգչի շուրջօրյա անխափան աշխատանքի ապահովում:<br>- Համակարգչային ներքին (լոկալ) ցանցի կապերն ապահովող ցանցային սարքերի շուրջօրյա անխափան աշխատանքի ապահովում:<br>- Համակարգչային ներքին (լոկալ) ցանցին միացված բոլոր համակարգիչների ցանցային հասանելիության ապահովում:<br>- Համակարգչային ներքին (լոկալ) ցանցի բոլոր բաժանորդների համար հակավիրուսային ծրագրային փաթեթի ամենօրյա թարմացում և գործարկում:<br>- Համակարգչային ներքին (լոկալ) ցանցի բոլոր բաժանորդների համար հակավիրուսային ծրագրի միջոցով համակարգչի աշխատունակության ստուգում:<br>- Ցանցային համակարգչում ցանցային ծրագրային փաթեթների տեղադրում և կարգաբերում:<br>- Համակարգչային ներքին (լոկալ) ցանցի միջոցով տվյալների փոխանցման շուրջօրյա իրականացման ապահովում:<br>- Տվյալների փոխանցման անվտանգության և գաղտնիության ապահովում (ցանցը պետք է լինի պաշտպանված, փակ ցանց և կապված չպետք է լինի ոչ մի այլ համակարգչային ցանցի):<br>- Համակարգչային ներքին (լոկալ) ցանցի ընդլայնման հնարավորության ապահովում (նոր համակարգիչների միացում գործող ցանցին):<br>- Համակարգչային ներքին (լոկալ) ցանցի տեխնիկական սպասարկման աշխատանքներ (ցանցային սարքավորումների սպասարկում, վերանորոգում և փոխարինում նոր համարժեք սարքերով):<br>- Microsoft File Server 2008 R2 արխիվացիաների քաղաքականության մշակում և իրականացում:<br>- Օգտատերերի ֆայլային ռեսուրսների ինտեգրում:<br>Microsoft File Server 2008 R2 ֆայլային ռեսուրսների կրկնօրինակում շաբաթական:<br>- Սերվերների վնասված windows server 2008r2 օպերացիոն համակարգի վերատեղադրում, գործիքային ծրագրերի տեղադրում (domain controler, file server) և կարգաբերում՝ անընդհատ աշխատանքը ապահովելու նպատակով:<br>- Domain controler Server 2008 R2 ժամանակավոր ֆայլերի մաքրում, օգտագործողների բազայի թարմացում, արխիվացում:<br>- Microsoft Outlook ծրագրի տեղադրում և կարգաբերում, արխիվային թղթապանակի բացում՝ էլ-փոստերը արխիվացնելու նպատակով<br>- Domain controler Server 2008 R2 սերվերի պրոֆիլակտիկա, ծրագրային և |

| | | |
|---|---|---|
| | | համակարգային թարմացումների տեղադրում:<br>- Domain controler Server 2008 R2 գրանցված օգտատերերի հասանելիության իրավունքների բաշխում:<br>-Համակարգչային ներքին (լոկալ) ցանցին միացված Domain controler Server 2008 R2 համակարգի ցանցային հասանելիության ապահովում:<br>-FreeBSD օպերացիոն համակարգի միջոցով՝ աշխատակայաններում ինտերնետ կայքերի հասանելիության իրավունքների տրամադրում proxy սերվերի միջոցով, թերությունների և խափանումների արտածում, ներթափանցման վտանգների կանխում, sqstat կամ համարժեք համակարգի միջոցով բոլոր օգտատերերի լոգ ֆայլերի ստեղծում:<br>-FreeBSD Unix օպերացիոն համակարգի միջոցով ինտերնետ ցանցի բաշխում, չափաբաժինների քաղաքականության մշակում և իրականացում, վեբ կայքերի դասակարգում:<br>WSUS համակարգի ներդնում, օպերացիոն համակարգերի թարմացման կենտրոնացված ղեկավարման համակարգ<br>-Վերջին շրջանում Microsoft ընկերության համակարգերը դարձել են ավելի խոցելի, երբ windows համակարգերը չեն թարմանում: Երբ բոլոր համակարգիչների օպերացիոն համակարգերը առանձին թարմանում են Microsoft ընկերության սերվերներից ինտերնետ կապը ծանրաբեռնվում է բոլոր աշխատակայաններում:Այս գործիքը թույլ է տալիս կորպորատիվ ցանցում առկա համակարգիչների օպերացիոն համակարգերի թարմացումը իրականացնել կենտրոնացված համակարգով և կապահովի ինտերնետ կապի արագության բարձրացմանը: |
| **2.** | ***Վեբ կայքի և էլեկտրոնային փոստի սերվերների սպասարկման ծառայություններ*** | - Ինտերնետային էջի մշակում.<br>www.mtad.am<br>- Ինտերնետային կայքերի անխափան աշխատանքի ապահովում:<br>- Ինտերնետային կայքերի անվտանգության ապահովում:<br>- Ինտերնետային կայքերում նոր մոդուլների ստեղծում:<br>- Պարբերաբար ինտերնետային կայքերի տեխնիկական թարմացում ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներով ժամանակին համահունչ:<br>- Ինտերնետային կայքերի ամենօրյա (ըստ անհրաժեշտության) թարմացում:<br>- Կայքերում նոր էջերի տեղադրում:<br>- Կայքերում նոր հղումների, նկարների և ինֆորմացիոն ֆայլերի ավելացում:<br>- Խմբագրական աշխատանքներ (տեղեկատվության փոփոխում, տեղափոխում, հեռացում, հին տեղեկատվության արխիվացում):<br>- Centos 6.8 կամ համարժեք օպերացիոն համակարգի ժամանակավոր լոգ ֆայլերի մաքրում, ծրագրային և համակարգային թարմացումների տեղադրում, լոգ ֆայլերի արտածում, գրանցված թերությունների հայտնաբերում և վերացում:<br><br>- Ինտերնետային էջի մշակում.<br>www.mail.mta.gov.am<br>- Mail սերվերում առկա 1500 հատ օգտագործողների բազաների կրկնօրինակում շաբաթական: |

| | | |
|---|---|---|
| | | - Նոր էլ փոստերի ստեղծում և կարգաբերում<br>- Ապահովել պատվիրատուի էլեկտրոնային փոստի սերվերի Centos 6.7 կամ համարժեք օպերացիոն համակարգի և ծրագրային ապահովման արդիականությունը և անխափան աշխատանքը:<br>- Ապահովել ողջ համակարգի տվյալների անվտանգությունը:<br>- Centos 6.7 կամ համարժեք օպերացիոն համակարգի ժամանակավոր լոգ ֆայլերի մաքրում, ծրագրային և համակարգային թարմացումների տեղադրում, լոգ ֆայլերի արտածում, գրանցված թերությունների հայտնաբերում և վերացում:<br><br>Հակավիրուսային համակարգ՝ ClamAV<br>ՀակաSPAMային ֆիլտրի համակարգ՝ spamAssasin<br>Արտաքին չարանենգ գործողություններից համակարգի անվտանգության ապահովելու նպատակով անհրաժեշտութուն է առաջացել ներդնել այս համակարգերը, քանի որ տվյալ համակարգերը պաշպանում են անցանկալի նամակներից և գրոհներից: |
| **3.** | ***Համայնքային ծառայողների տվյալների կառավարման էլեկտրոնային տեղեկատվական համակարգի սպասարկման ծառայություն*** | 1. Համայնքային ծառայողների տվյալների կառավարման տեղեկատվական համակարգ տեղադրում<br>• Օպերացիոն համակարգ - Server 2008 R2<br>• Տվյալների բազա - MS SQL 2008 R2 SP1 Express Edition<br>• .NET Framework - NET 3.5 SP1<br>2. ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունում կենտրոնացված բազայի ստեղծում:<br>3. ՀՀ բոլոր մարզում տվյալների բազայի ստեղծում:<br>4. ՀՀ բոլոր մարզերի տվյալների բազաների ինտեգրում կենտրոնացված բազայի հետ:<br>5. Տվյալների բազայի կառավարում՝<br>• Տվյալների արտահանում<br>• Տվյալների ներմուծում<br>• Տվյալների բազայի արխիվացում շաբաթական<br>• Տվյալների բազայի վերականգնում<br>6. Տվյալների բազայում նոր օգտատերերի բացում<br>7. Տվյալների բազայում օգտատերերի հասանելիության իրավունքների բաշխում<br>8. Ծրագրային փաթեթի տեղադրում (Client) ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության և ՀՀ բոլոր մարզերպետարանների օգտատերերի աշխատակայաններում:<br>9. Ծրագրում բացահայտված թերությունների վերացում և ծրագրի անխափան աշխատանքի ապահովում:<br>10. Ծառայությունները պետք է մատուցվեն ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունում և ՀՀ բոլոր մարզերպետարաններում:<br>11. Համայնքային ծառայողների տվյալների կառավարման տեղեկատվական համակարգ բազայի ծրագրային ապահովում: 18 խոշորացված համայնքների մոդուլների ստեղծում և ծրագրային կարգաբերման աշխատանքներ: ՀՀ մարզերի տվյալների բազաների ինտեգրում կենտրոնացված բազայի հետ: |

| | | |
|---|---|---|
| | | 12. Համայնքային ծառայողների տվյալների կառավարման տեղեկատվական համակարգի տվյալների բազայի MS SQL 2008 R2-ի համակարգի անցում MS SQL 2012 համակարգի, որը թույլ է տալիս բարձրացնել համակարգի անվտանգությունը և արագագործությունը |

| Ծառայության մատուցման ժամկետը | |
|---|---|
| Սկիզբը | Ավարտը |
| Պայմանագրի կնքման պահից | 20.12.2017թ. |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
Կառավարական տուն 3
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011001295
ՀՎՀՀ 02578338

**Աշխատակազմի ղեկավար**

------------------------------ Մ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

Ա/Ձ Լեռնիկ Սարիբեկյան Մամիկոնի
ք. Աբովյան, 2-րդ փողոց, տուն 11
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930056573280100
ՀՎՀՀ 85805035

**Ա/Ձ**

------------------------------ Լ.ՍԱՐԻԲԵԿՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ

*Հավելված 2*
*«05» դեկտեմբերի 2017թ. կնքված*
*№ ՀՀ-ՏԿԶՆ-ՇՀԾՁԲ-15/18-17-6/5/1 համաձայնագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| N | Ծառայության անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| **1** | ***Ցանցային ադմինիստրատորի ծառայություն*** | | | 65.0 | 130.0 | 195.0 | 260.0 | 325.0 | 390.0 | 455.0 | 520.0 | 585.0 | 710.0 | **710.0** |
| **2** | ***Վեբ կայքի և էլեկտրոնային փոստի սերվերների սպասարկման ծառայություն*** | | | 210.0 | 420.0 | 630.0 | 840.0 | 1050.0 | 1260.0 | 1470.0 | 1680.0 | 1890.0 | 2300.0 | **2300.0** |
| **3** | ***Համայնքային ծառայողների փվյալների կառավարման էլեկտրոնային տեղեկատվական համակարգի սպասարկման ծառայություն*** | | | | 200.0 | 200.0 | 200.0 | 650.0 | 650.0 | 650.0 | 1800.0 | 1800.0 | 1980.0 | **1980.0** |
| ***Ընդամենը՝*** | | | | ***275.0*** | ***750.0*** | ***1025.0*** | ***1300.0*** | ***2025.0*** | ***2300.0*** | ***2575.0*** | ***4000.0*** | ***4275.0*** | ***4990.0*** | ***4990.0*** |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ տարածքային կառավարման և
զարգացման նախարարություն
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
Կառավարական տուն 3
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011001295
ՀՎՀՀ 02578338

**Աշխատակազմի ղեկավար**
------------------------- Մ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
Ա/Ձ Լեռնիկ Սարիբեկյան Մամիկոնի
ք. Աբովյան, 2-րդ փողոց, տուն 11
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930056573280100
ՀՎՀՀ 85805035

**Ա/Ձ**
------------------------- Լ.ՍԱՐԻԲԵԿՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ